






ALPHEUS

1850

STANDARD

OF THE
OF THE



OF THE

OF THE



Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 8

1 ՅՈՒՆԻԱՐ 1902





Կ Ա Ղ Ա Ն Դ Ը

ասա վերջին գիշերն ալ ցուրս, խաւարին .
Դուրսն հաշիկներ բիւրեղ՝ առաս կը տեղան .
Սակայն ի՞նչ փոյթ, ներսը մտեր կը վառին ,
Ու պատրաստուած է Կալանդի նոյն սեղան :

Սեղան՝ որուն շուրջը կարգով բոլորած՝
Ո՛րքան անյագ աչիով դիտէ, հիմա, դուք ,
Միտքերն անուշ , բոկեղն ու ծաղ , կըլոր հաց ,
Թուզն եւ արմաւ . . . կը՛նթ . . . կուլ տալով միտք ձեր բուք :

Հընչած է ժամն . ա՛լ ըստատել անհրնար .
Հո՛ն եմ պուպրիկ , պասկեր , տեսակ ու գընդակ .
Բարի հայրիկն ա՛լ ձեզ զըսպել չի կըրնար ,
Ու կ'ըստիպուի բաժնել . . . եւ դո՛ւք . . . կը խընդա՛ք :

« Ա՛ն այս գրի տեսակը նոր , Յովհաննէ՛ս .
Տեսնեմք քեզ , մօրքդ սիրն ալ բունդ չի հանես .
Այս պասկերն ալ քեզի կուտամ , ծոյլ Սարգիս ,
Լուսցածին պէս՝ ցատես ելլես , չի պառկիս :

« Դո՛ւք , օգնելնուդ համար ձեր մօր՝ կ'ընդունիք ,
Մէյմէկ բրդեայ ցրփսի , Արեմ եւ Նունիկ ,
Դուք՝ որ չեղաք չար , խեղ , բմբոս , բընաւին ,
Արժանի էք այս գեղեցիկ պարգեւին :

« Եւ այս սիրուն պուպրիկն ալ դո՛ւն առ , Նարդի՛կ ,
Բայց միտք սիրով հետը խաղա հանդարտիկ .
Այս կակուղիկ գընդակն ալ բուկդ է , Աքիկ ,
Ըրէ՛ , տեսնեմ , հիմա անգամ մը ծափիկ :

« Քեզի ալ տա՛մ շաքար , սիրական Արմէն ,
Եկուր նայի՛մ , չիյնա՛ս . տաքս ու մենմէն ,
Խուշիկս աղուն , տաքս , մենմէն ու տաքս ,
Մի՛ վախճար , մի՛ , ուժով բըռնէ դուն մաքս : »

* * *

Եւ կ'ըսկըսիք ուտել միտքերըն համեղ —
Տասնոցաւար կարմիր խընձորն անուշակ :
Նարինջ , ընկուզ , կաղին , չամիչն ու պատեղ . —
Կեցցէ՛ յաւերժ ձեր մանկական ախորժակ . . . :

Վայելեցե՛ք խաղաղ մրտնոյ ու սրտնոյ ,
Բարի Կաղանդն՝ անգիտակից մանկութեան ,
Հիմա սահի՛ր քող՝ անկրկնի՛մ , անվրդով՝
Ձեր երջանիկ կեանքին ամեն մեկ վայրկեան . . . :

Ո՛հ , երանի՛ր քե՛ աղանդեր , խաղալիք .
Ձեր սեղանեն միշտ անպակաս մրնային ,
Իցիւ քե միշտ ունենայինք , Սիրելի՛ք ,
Անուշ պատրաստե՛նք . . . անմեղութեան երկնային :

Ա . Կ . ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ



ՆՈՐՏԱՐԻՆ

ԵՒ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՇՆՈՐՀԱՌՈՐԱԿԱՆԸ

Նոր դարն սկսող առաջին տարին վերջացաւ և նորն ահա մեզ ողջունեց : Ամենուս կեանքին ծառեր աշուն մը տերեւ թօթափեցին : Թէեւ դառն է մտածել , պահ մը ամենուս համար այսօր , երբ մեր աչքեր մեր շուրջը դարձնենք՝ թէ՛ թափու՛ւր ու որբաբացած ենք , ո՛հ , շատ մը սիրական ու պատկառելի դէմքերէ , որոց ներշնչուն ներկայութիւնը մեր ընտանի բոյնին կամ մեր ընկերական շրջանակներուն մէջ մեզ կ'ուգեաւրէր , կը մխրթարէր և նոր Տարին անոնց շնորհաւորելն և անոնց մեզ հետ խընդակցիլն ամենուս կը պատճառէր հոգեբանական գերագոյն հրճուանքն ու քաղցրագոյն հաճոյքը որով կը պարարէին և կը կայտուէին կարծես մեր սրտերը , կ'զգայինք մեր կեանքն աւելի երջանիկ , կը տեսնէինք մեր ապագան աւելի փայլուն : Այնպէս որ մենք անոնց մէջ կարծես նորէն կը վերածնէինք , կը ծլէինք , կը ծաղկէինք նոր տարւոյն հետ , նոր յոյսերով , նոր փափաքներով աւելի խանդավառ , նոր պարտքերու , նոր սէրերու բազմապատկալ օղակներովն իրարու հետ աւելի սերտ շարուած շղթայուած , և գուրգուրանքի , գգուանքի խանդաղա-

տուն բիւր փայլալայանքներով իրար աւելի պինդ կ'ողջագուրէինք : Սակայն անողորհարկէն այնպէս ճակատագրուած ենք որ , ինչպէս ժպտուն աչքով մը կուտանք մեր նոր ողջոյնը նոր խանձարուրներուն որ կեանքին հորիզոններէն խնդուով , սփոփումի նոր արեւագալները կ'այգորեն մեզ . տա՛նք նաեւ պաղուն աչքով մ'ալ մեր տըխրանքն ու սգոյ նոր յարգանքը այն գերեզմաններուն , ուր մարը մտած մեր սիրելիներու կեանքին արեւը կ'երթայ ուրիշ աշխարհի մը լուսաւորները լինելու համար , և միւր նոր տարւոյ խնջոյքի ու խրախճանքի սեղանին շուրջ բոլորուած , արցունքի սպունգ սփոփանքին հետ լեցնելով շնորհաւորումի բաժակին մէջ , մեր Ամանորի խուսափուկ ցնծումները , պարպենք անոնց յիշատակին , իբրեւ բացակայ սիրելիներուն կեանքին , եւ մեր ամենուս արեւշատութեան . բարեւոհութեամբ իրարու . « Բարի եկաւ Նոր Տարին , նոր բարիներ բերէ մեզի . շատ տարիներ վայելենք նոր կաղանդներու բարիներն ու նորէն զիրար գտնենք այս միեւնոյն սեղանին շուրջը՝ կեանքի կոչունքին երջանիկ մշաւիրեալներ . գտնենք զիրար բարի ծը-

նողք, բարի գնական, բարի քրիստոնեայ, բարի մարդ, ազգին ու պետութեան բարի քաղաքացիներ ու վերջապէս բարի հայ. և բոլոր այս բարեմասնութեանց հետ լինինք նաեւ « Հանրագիտակ » ի բարի ու բարեկամ ընթերցողներ, և անոր շատ մը փայլուն ու բեղուն նորանոր տարիներ շնորհաւորողներ »:

* * *

Կաղանդն ինչպէս յայտնի է, լատիններէն է: Հին Հռովմայեցիք սովորութիւն ունէին մէն մի ամսոյ առաջին օրը կոչել կաղանդ (callende) որ կը ծագի (calo) գալո՝ կը կոչեմ, հրաւեր կը կարդամ լատին բայէն, որովհետեւ քրմապետ մը կամ դէնպետը նոյն օր հրաւիրեալ ժողովուրդին կը ծանուցանէր նոր լուսնոյ վերադարձը: Նոր լուսնոյ սոյն ծանուցումը ընդհանրական ազդարարութիւն մըն էր առ ժողովուրդն որ իր պարտքերը վճարէ, որովհետեւ կաղանդի այսինքն ամսուան առաջին օրերը պարտուց հատուցման յատկացուած էին. նոյն օրը ամեն տալիք ու առնելիք պիտի յարգարուէին, գանձուէին, եւ որովհետեւ Յոյները կաղանդ չունէին, անոր համար Հռովմայեցիք պարտքը չիվճարողին կ'ըսէին, լուսնական կաղանդին կը վճարէ, ըսելու համար թէ այս մարդը տալիքը վճարելիք չունի. սոյն իմաստով նաեւ ուրիշ առածաւոր ասացատրութիւն մը ծագում առած է, որով լըռուի, Յունական կաղանդին յղել, բան մը դործ մը, որոշում մը, անպայման և անորոշ հերպով յետաձգելու համար. ինչպէս Հայքս ալ սովոր ենք գաղափարի տարբեր իմաստով ըսել, ծուազակին կամ յունական զակին ձգել, ուշացնել ըսելու իմաստով:

Կաղանդի պատմական այս հակիրճ ակնարկէն կը հասկնանք թէ ինչ որ հին Հռովմայեցւոց մէջ ամեն մէկ ամսոյ առաջին օրուան համար կատարելի էր, մենք ալ կը յատարենք իւրաքանչիւր տարւոյն առաջին օրը կոչելով զայն Կաղանդ, այսինքն օր պարտուց հատուցման, օր՝ ուր հրաւէր կը կարգան ու կոչում կ'ընեն ամենուն ո'չ միայն իրենց նիւթական այլ և բարոյական պարտքերը վճարելու: Եւ արդէն երբ կաղանդն իրարու կը շնորհաւորենք, չէ՞ մի որ իրարու հետ տաժած և տաժելիք մեր քաղաքավայրական ու յարգական, երախտագիտական կամ բարեկամական զգացումներուն, մեր քաղաքաւարական սիրոյն ու պարտուց առ-

հաւատչեայ հաւաստիքներն իրարու ընծայելու և զանոնք վերանորոգելու համար է: Ապա՝ Հանրագիտակ կը շնորհաւորէ Նոր Տարին, Նոր Կաղանդը այն բարի ազգայիններուն, բարի այն ամեն մարդերուն, որք ինչ անունով, ինչ տիտղոսով, ո'ր միջօրէականի տակ ալ գտնուին, և ընկերական ո'ր դասակարգին ալ պատկանին, կատարած են իրենց անհատական թէ պաշտօնական պարտքը. իրենց միջավայրի պայմաններուն, իրենց կարեաց ներածին չափ:

Շնորհաւոր Նոր Տարի ուրեմն ամեն հոգեւոր այն Պետերուն ու մեր ամէն Ս. Հարց, որք իրենց հայրապետական, եպիսկոպոսական, վարդապետական, քահանայական, առաջնորդական, քարոզչական, բոլոր հովուական պարտքերը լիովին կատարեցին, նըման Աւետարանի արի ու բարի հովիտին որ զանձն իւր եղ փոխանակ հոսին իւրոյ, ու չի նմանեցան այն հովիտին որ՝ իր հօտին կաթը կ'իջէր, բուրդը խուզելէն յետոյ՝ ինք հանգստապատառ կեանքը քշելու համար, կը քաշուի փարախը կամ իր երգիքը՝ անգլուխ թողելով երամակը լերանց ու անտառաց մէջ վոհմակին գիշատմանց նշաւակ: Շնորհաւոր Նոր Տարին մեր ազգային մեծատուն ամեն այն բարերարաց, որք իրենց նահապետական առատաձեռնութեամբ, իրենց աւետարանական բարեպաշտութեամբ, իրենց բարեյիշատակ, լուսահոգի նախնեաց ու նախորդաց պատիւ բերող, եւ իրենց յետոյց, իրենց յաջորդաց ու զաւակաց բարի օրինակ հանդիսացող, եւ իրենց հետ իրենցներն ալ մեր ամենուս մշտադօթ օրհնութեան արժանացող մեծահոգի վեհանձնութեամբ՝ բարեւարեցին, օգնեցին տնանկին, չքաւորին, և ո'չ թէ Աւետարանի պորտաբոյծ ու ընչաքաղց մեծատան պէս Ղապարոսները նօթի ու ծարաւի դողդաղացոյցին շունները կշտացնող որկորածէտ սեղանէն ինկած փշրանքին դէմ, և իրենց սագերն ու բադերը լողացող ու արբուցանող Լուկուլեան աւազաններուն հանդէպ: Շնորհաւոր Նոր Տարի ամեն կողմի ազգային պաշտօնական Մարմնոց որք, իբրեւ ժողով, իբրեւ Խորհուրդ, իբրեւ Հոգաբարձութիւն, իբրեւ Դիւան, իբրեւ ո' և է պաշտօնատուն, հանրօգուտ ու բարենպաստակ գործ մը կատարեցին, նոր հաստատութիւն մը հիմնեցին կամ եղածն ալ

աւելի ծաղկեցուցին ու ամենուն վստահութեան, շնորհակալութեան քուէներուն, ամենուս քաջալերական ծափերուն արժանացած, և ո՛չ թէ՛ Սաղմոսին ըսածին պէս, ժողովեցան և անպիտանացան, և ո՛չ թէ՛ ինչպէս կ'ըսէ Աւետարանը, ժողովեցան հոն ուր կը ժողովուին արծիւները, և ոչ թէ իմաստութեամբ շինւածը տգիտութեամբ քանդեցին, հաւատարմութեամբ աւանդուածներն անհաւատարմորէն տարտղնեցին. Յիսուսին տեղ Նեոք, հանրութեան տեղ, իրենց եզական սին, միադէմ՝ կամ դիմազուրկ եսը կռապաշտեցին, եւ ո՛չ թէ կուսակրօնութեան տեղ մօրմօնականութիւնը, իր բոլոր նողկալի եւ դերաքրիստոս աղանդաւորումներու ձեւերուն տակ Շնորհաւոր Նոր Տարին ազգային ամեն բարի գործիչներուն, գրիչներու եւ նա մանաւանդ ամեն տաղանդաւոր ու վաստակաւոր Ուսուցիչներու որ միշտ նոր ոյժ, նոր լոյս տուին մեզ, նոր յոյս ներշնչեցին ու մեզ առաջնորդեցին դէպ ի մեր խտէալն ուղիղ, եւ որք բարեկրթեցին մեր զաւակները. բարի, առաքինի, միտք, սիրտ, հոգի տուին անոնց, եւ մեր ազգ-նորարոյս իմացականութիւնը բազմաբոյր ու ու բազմաթոյր ծաղկեցուցին արժանանալով հանրային վարձատրութեան, հանրային շնորհապարտութեան, եւ ո՛չ թէ իրենց յոռի ընթացքով, իրենց սնոտի շաղակրատութիւններով մեր ուշիմութիւնը խաբեցին, մեր հսկող, տքնող արթնութիւնը քնացուցին, իրենց չի գիտցածը մեզ իմաստակօրէն վայրաբանելով մեր գիտցածներն ալ մոռցուցին. եւ ո՛չ թէ մեր մատաղ սերունդին մտքերը՝ կրթելու տեղ, կուտեցին. դանոնք վառելու տեղ՝ մարեցին: Շնորհաւոր Նոր Տարին այն ամէն հանճարեղ ուսանողաց, այն խելացի տղայոց՝ որք մրցանակի ու վրկայականի պատուով մեծարուեցան, եւ ո՛չ թէ իրենց անառակ, ծոյլ, հեղգ ու անաշխատ վարմունքով, ուսմանց անսիրելութեամբ, յոռենիւներով եւ պարտաւնեցող աւթաւար մնացին, որպէս կը մնայ մյուսը՝ բաժակին յատակը: Շնորհաւոր Նոր Տարին ամեն ծնողաց՝ որք իրենց զաւակունքը, և զաւակաց՝ որք իրենց ծնողքը խնդացուցին և ո՛չ թէ լացուցին: Շնորհաւոր Կաղանդն ամեն այն Տիկնանց որք Աւետարանի այրւոյն օրհնեալ լուսման նետեցին Յիսուսի գան-

ձանակը: Բարի՛ Կաղանդ այն ամէն ծանօթ թէ անծանօթ բարի անձանց՝ որք այսօր ուրախացուցին անտէր որբ մը, մխիթարեցին սգաւոր մը, իրենց կորովը ցուպ ու նեցուկ ընծայեցին հիւրեալ, ծիւրեալ ծերունւոյն կթոտ ու դողդոջուն քայլերուն: Վերջապէս շնորհաւոր Նոր Ամանորն այն ամեն հասակի ու սեռի բոլոր հոգիներուն, որք հօր մը պաշտպան բազուկով, մօր մը փափկասուն ծոցով, քրոջ մը գրկով, եղբօր մը ձեռքով, գութ, սէր, կարեկցութիւն թէ արգահատանք, ժուռ ու ման եկան ընտանեկան թէ ընկերական այն ամեն խաւերուն ու խորշերուն մէջ ուր եղկելի մը կը տառապէր, ուր համեստութիւն մը կը տուայտէր, ուր հոգի մը, մարդ մը, Աստուածորդի Յիսուսին պէս ամենակարօտ լինելով հանդերձ՝ իր խաչին վրայ դամուած կ'աղաղակէր « Լամասաբաքթանի »:

Իւր այս բոլոր հոգեբուխ շնորհաւորումներուն հետ, Հանրագիտակ ի խորոց սրտէ կը բարեմաղթէ շատ ու շատ երջանիկ ու բախտաբեր Նոր Տարիներ նաեւ այն բոլոր Պատուարժան Պաշտօնակցաց որք իր պատմական համարման ու համակրանքի օրացոյցին մէջ հաճեցան արձանագրել շնորհակալութեան ու շնորհապարտութեան արժանի սրտագին ու թանկագին աստիճանաւոր բարենիշեր, համաձայն իրենց ազնուական ու բարեկամական այն զգացումներուն եւ մըտածմանց, որք սիրող են աննախանձ ու անշահախնդիր ոգւով գնահատել, քաջալերել ու հռչակել, իրենցինն հետ, ամեն հանրօգուտ ու բարենպաստակ ձեռնարկ:

Հանրագիտակ՝ իր տիտղոսին և իր պաշտօնին բերմամբ այս հանրային ու հաւաքական շնորհաւորումներէն յետոյ՝ ամանորի իր է՛ն սրտագին ու հոգեբուխ բարեմաղթութիւնները կ'ընէ կեանքն ու ժամանակը մարդոց շնորհող արարչէն վերջ, երկրի վրայ Անոր նախախնամական փոխանորդն եղող Վեհ. ԱՐՔԱՅԻՆ՝ որ ինչպէս երկրին ամեն թերթերուն, նոյնպէս եւ Հանրագիտակի գոյութիւնն ու շարունակութիւնը պարգեւող մեծանուն ինքնակալն է:

Հանրագիտակ՝ Բարի Կաղանդ կը մաղթէ իր սիրական ընթերցողներուն, իր բոլորանուէր ու ժրաջան Գործակալներուն, իմաստուն թղթակիցներուն, տաղանդաւոր Աշ-

խատակիցներուն որոնք օրէ օր նոր ոյժեր
կը բերեն՝ իր աւելի ընդարձակ տարածման
և աւելի հանրագոյտ զարգացմանը սատա-
րելու համար:

Ձի Հանրագիտակ՝ իբրեւ պարբերական
ընթերցարան ու հմտարան, իր ինքնա-
րուն ուղղութեան համեմատ, իր տեսակին
մէջ միակն ու ամենափայլունն է, զոր զա-
ւակն ու ծնողք, ուսուցիչն ու ուսանող, եղ-
բայրն ու քոյրը, պզտիկ թէ մեծ կրնան
կարդալ և օգտուիլ անոր հրատարակած
նիւթերէն: Նամանակաւն չեմք յիշել չըջանին
մէջ՝ պիտի ճոխանայ դպրոցական ամեն կար-
գի տղաքներու յարմար ու բարոյալից նիւ-
թերով ու մանկավարժական նորութիւննե-
րով: զի դպրոցական ուսանողներէն ո՞վ
կարօտ չէ հանրագիտական հմտութեանց,
քանի որ այսօր մանկապարտէզի երախանե-
րէն սկսեալ՝ մինչեւ բարձրագոյն կարգի
ուսանողներուն ընթերցարաններն ու դասա-
դրքերն ամէնն ալ, հանրագիտական ոճով
խմբագրուած են: Հանրագիտակի նոր չըջանը
նշանակելի է նաեւ այն գեղեցիկ, ընտիր ու
նորատիպ պատկերներով որ պարբերական
բոլոր արդի հրատարակութիւններուն մէջ
բացառիկ ու նախանձելի առաւելութիւն մ'է:

Եւ իր այս առաւելութիւններուն համար
ունեցաւ Հանրագիտակն ալ՝ որպէս երբեմնի
արեւը՝ մաքի խաբշիկները՝ որ իր պայծա-
ռութեան դէմ հայհոյել ուզեցին՝ արձանա-
գրուելով անշուշտ հայհոյանաց տախտակին
վրայ: « Որով դատաստանու դատէք, նո-
վին դատաստանու դատելոց էք » ըսուած է:
Հանրագիտակ նոր տարւոյն ուրախու-
թեանց հետ չի մոռնար յիշեցնել իր ըն-
թերցողաց, նաեւ անցեալ տարւոյ Ազգա-
յին կեանքին մեծ ու նշանաւոր տխրա-
կանը: Նոր դարը կ'առաւօտէր եւ ազգային
Մամուլ հիմնադիրներէն՝ Արեւմտեան լուսա-
ւորութիւնը Արեւելայցի պատարագող մոքի
վարդապետներէն բարձրագոյնը, մեր նոր
գրականութեան Նահապետը, մեծ Հեղի-
նակն ու իմաստասէրը՝ յոքնավաստակն
ՄԱՏԹԵՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ կ'երեկոյանար իր մահ-
ուան՝ Յունվար 1 ի Տարեկիցին ի պատիւ,
պարտական ենք մեր միամեայ սուգի շղարչն
հանել և դամբանին լուսութիւնը խօսեցնել:
մոռնալով մեր քէնը Մամուրեանը մեզմէ
խլող ապիրատ մահուան դէմ: ԱՐՄԵՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

Ահա եկաւ նոր տարի
Ժպտուն դիմւով մ'ու բարի,
Հաւասարիմ իր խոսման,
Ամեն ձմեռ կուգայ ան:

Ի՞նչ փոյթ, ձմեռ ձիւնաբեր
Մեր պարտեզներն է կապեր,
Մինչ կաղանդն ալ, ամրան պէս,
Մեզ պտուղներ այ պէս պէս:

Հին տարւոյն հետ ցաւեր հին.
Մեզմէ անցան ու գացին.
Նոր արեւոյս մ'յոյսերու
Մեր սիրտ խանդով կը լնու:

Նկե՛ք, մանկունք աղփասի՛ն
Ալ կաղանդէն քանք բաժին.
Որ, նոր տարւոյն հետ, այսօր
Մեր սրտերն ալ ըլլան նոր:

Հիներ հագնող աղփասին՝
Հին է նաեւ նոր տարին,
Եւ խեղճ որբին չ'օգնողին
Շնորհաւոր չէ տարին:

Հին է, միշտ հին, նոր տարին,
Թէ մեր մեքեր չ'աշխատին,
Ծոյլ, անուսում տղաներ
Նոր տարին, չէ՛, չեն գիտեր:

Չարին, ծոյլին նոր տարին
Շուտ կը փոխուի կ'ըլլայ հին
Աշխատողին ամեն օր,
Ժամն իսկ կ'ըլլայ տարի նոր:

Ամասիա

Արիւնիկ:



ԿԱՐՁ ՈՒՂԵՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԵ

Ով որ յիսուն տարի առաջ Ս. Մատթէոսի տօնին օրը վերին Աթմիւլբուլէն ելլէր կապոյտ աշնանածաղիկներ ժողվելու համար, պիտի տեսնէր թէ համբալի երիտասարդ մը ինչպէս իր մօրմէն պիտի բաժնուէր:

Իր որդին, վախճանեալ հօրը նման կօշկակար մը, քանի մը օրէ ի վեր, խոր մտածմանց մէջ ընկղմած իր աթուակին վրայ կը նստէր: Եւ երբ իր մայրն իրեն հարցնէր. « Անդրէաս ի՞նչ ունիս, ի՞նչ կ'ըզաս »: Ամէն անգամ պատասխան մը կ'ընդունէր, ուրկէ մայրն այնչափ քիչ բան կրնար քաղել, ինչպէս հաւը փայտի սղոցուկէն: — « Առանց քու մտածմունքդ ինձի ըսելու, ես շատ լաւ դիտեմ, Անդրէաս, ըսաւ մայրը թէ ցաւած ակռադ ո՞ւր է: Հօրդ տունը քեզի այլ ևս հաճելի չըլլար, սատանային անապատութիւնն է որ քեզ շատ նեղը կը խոթէ: Ինչպէս նիւրնալէրի և Ֆրանքֆորդը բրած ճամբորդութեանդ միջոցին տեսած կօշկակարներուդ նման վարպետ կօշկակար պարօն մը կրնաս ըլլալ և չե՛ս գիտեր թէ դուն շատ աւելի հաստատ և ապահով վիճակ մը ունիս անոնցմէ, որոնք այլ ևս կօշկակալն իրենց ոտքին չեն անցըներ, ապա միայն կը ձեւեն ու կը կտրեն, Բայց յանուն Աստուծոյ, եթէ ինձմէ հեռանալ կ'ուզես, գնա՛: Եթէ քեզ հոս պահեմ, միշտ դժգոհ պիտի ըլլաս. իսկ եթէ հաստատապէս երթալ ուզես, ինչպէս կը կարծեմ, շատ պիտի ցաւիս բրածիդ վրայ Անդրէ՛աս, մեծ տարբերութիւն կայ քանի մը տարուան ճամբորդութեան և ընդմիշտ հայրենիքէն ու մօրմէն բաժանման մէջ »:

Վերջապէս Անդրէաս կէս շարժում մը ըրաւ իր աթուակին վրայ և ըսաւ. « Մայր ես ամէն բան լաւ մտածեցի, կրնամ քեզ ըսել թէ այլ ևս հոս չպիտի մնամ »:

— Ի՞նչպէս Անդրէաս, հարցուց այրին, որն որ տղուն ետեւը աղէկատին քով նըստած, այնպէս կը ձեւացնէր թէ բնաւ չի զարմանար անոր խօսքերուն վրայ և իբր թէ տղան ըսած ըլլար որ՝ պատրաստ կօշիկները զանոնք ապսպրող վարի պանդուկապետին տանի:

— Հոս այլևս դործ մնացած չէ, ըսաւ Անդրէաս, ով որ անգամ մը հոս այս բոյնին մէջ մնայ, անիկա կեանքին մինչև վերջը հոս անցնել պիտի ստիպուի:

— Իրաւունքունիս, յարեց մայրը, հանդուցեալ հայրդ շատոնց քսան կօշկակալ պատուեց իրեն և քեզի համար, և վերջ ի վերջոյ իր կենաց ընթացքին մէջ հազիւ կոչուեցաւ « Պատուաւոր Բալմպիրկցի Յովհաննէս Մատթէոս, վարպետ կօշկակար », ասկէ ոչ աւելի և ոչ պակաս բան մը եղաւ:

Կօշկակարը շարունակեց, « ես Անդրիա կամ Ամբրիկա պիտի երթամ, շատեր իրենց բախտը չինած են հոն »:

— Ա՛յդպէս է, բախտերնին բանած է, յարեց այրին իր որդւոյն:

— Շիտակը Սաքսի մէջ, Շընէպէրկէն դուրս գտնուող Թամբադործի մը Ագէրման անուն սատարին համար կը պատմեն թէ տարիներ առաջ Բարիզի ճամբով Լօնտօն գնաց, ուր հարստութիւն կազմեց, և երեւելի մարդ մը եղաւ, եւ այժմ կոմսեր և իշխաններ անոր տունը կ'ելլեն կը մտնեն ամէն օր, ինչպէս հաւերը մեր տունէն, և Շնէպէրկի մէջ գտնուող իր աղքատ բարեկամին ալ դրամ կը ղրկէ եղեր ամսէ ամիս: Ես ալ քեզ պիտի չմոռնամ, սիրելի մայրիկս, ապահովեց երիտասարդն աթուակին վրայէն, և պանդուկապետին կօշիկները մէկ կողմ դրաւ, վերջին փայլն ալ տալէ ետքը. « Ժամանակ ժամանակ քեզ պիտի գրեմ, թէ ի՞նչ կ'ընեմ, և անգամ մըն ալ ինձմէ քեզի եկած նամակի մը տակ պիտի կարդաս: « Ձեր երախտապարտ որդին կօշկակարապետ նորին Վեհափառութեան, Պրինգանիոյ, Սկովտիոյ, և Իրլանտիոյ Թագաւորին », այն ժամանակ շուտով կրնաս ճամբայ ելլել դէպի ինձի, ինչպէս Յակոբ Նահապետն իր Յովսէփ որդւոյն նգիպտոսի մէջ, եթէ երբէք միլիոնատէր ալ ըլլամ, քեզ երբէք պիտի չամչցեն »:

— Մինչև հո՛ն, յարեց մայրը, և իր գոգնոցով աչքին արցունքները սրբեց, ինձի համար երբէք հոգ մ'ընէր, որովհետեւ նոր տուն մը, ախոռին մէջ երկու կով և քանի մը արօտավայր դաշտին մէջ շատ են այրի կնոջ մը համար »:

Դեռ խօսքը կը շարունակէր, երբ Անդրէաս սկսաւ իր աթուակին շուրջը գտնուած բաները ժողվել. մայրն ընդդիմացաւ և

ըսաւ. « Սիրելի՛ որդիս ասիկա ինծի ձգէ, միայն արհեստիդ վերաբերեալ գործիքդ ա՛ռ, որուն քու ճամբորդութեանդ մէջ իբր սատար պէտք կ'ունենաս, պայուսակդ ալ կապէ: Ճամբորդութեանդ պարկը, զոր դուն երեք տարի առաջ ֆրանքֆորթէ հեռոք բերիր, դեռ նոր է, սենեկին պատէն կախուած է: Դեռ ժամանակ ունիմ մինչև բաժանումդ քեզ համար կերակուր պատրաստելու, որովհետեւ իրիկուան դէմ պիտի մեկնիս, և այսօր արդէն մինչև Միլէնպուրկ կրնաս երթալ, եթէ անօթի երթաս շատ կը նեղուիս ճամբան: »

Եւ այսպէս ալ պատահեցաւ: Անդրէաս կապեց պայուսակը, իր կերակուրը հաճոյքով կերաւ, երկու երեք ժամ մօրը հետ ասդիէն անդիէն խօսեցաւ և այնուհետեւ մօրը հետ մինչև դուռը գնաց:

Իսկ այրի մայրն ըսաւ ինքնիրեն, երբ երկու ձեռքը վերարկուն գրպանը դրած իր խուցը կը դառնար. « Ամէն բան հոս ձգել տուի, նոյն իսկ իր աթոռակը, որովհետեւ ես լաւ գիտեմ թէ անիկա երկայն ատեն պիտի չմնայ »: Մէկ ժամ յետոյ դրացուհին եկաւ, և հողաթափներ բերաւ կարկտել տալու համար, մայրն զանոնք առաւ և ըսաւ. « Վաղը երեկոյ կրնաք գալ և զանոնք առնուլ, որովհետեւ այն ատեն լմնցած կ'ըլլան »:

Իսկ Անդրէաս իր ճամբան կ'երթար, բայց շատ երկայն եկաւ իրեն Անգղիա և Ամերիկա տանող ճամբան. արդէն իսկ մօտակայ գիւղերուն մարգագետիններու վրայ գտնուած ատեն միտքը դրաւ նոր Աշխարհի հետ գործ չունենալ, իսկ Մէօնիսվալտի մէջ Անգղիա երթալն ալ ձգեց, և ճամբորդութեան ծրագիրը մինչեւ ֆրանքֆորթի ինջաւ, և երբ Մէրքէնտորֆի տնակներու մէջէն երեկոյեան լոյս մը աչքին երևցաւ, նման երկինքի առաջին լուսաւորներուն, այն ատեն կատարելապէս զգաց թէ ի՛նչ ըսել է մայրն ու ծննդավայրն ընդ միշտ լքանելն:

Այսպէս կօշկակարներու օթեւանը իջաւ, ստէպ և քիչ քիչ իրեն հրամցուած դարձրէն խմեց առանց մեծ ախորժակի, յետոյ բեռնակիրներու մէջ պառկեցաւ, իր ճամբորդութեան պայուսակը գլխի բարձրաւ, յետոյ պանդոկապետը մարեց ճարպա-

լից կանդեղը և միայն լուսնոյ լոյսը կ'իշխէր սենեկին մէջ:

Անդրէաս գէշ տեղ ընտրած էր պառկելու համար, իր ձախակողմը քնացող ընկերը թերեւս կագի ու կռուի վրայ կ'երազէր, զօրաւոր կերպով չորս կողմը իր խոշոր և կարծր ոտքերով հարուածներ կ'իջեցնէր և ուղղակի կօշկակարին ծոծրակին կը հանդիպեցնէր. մեր խեղճ ուղեւորը ցատքեց իր տեղէն սարսափահար և ուրիշ պառկելու տեղ մը ընտրեց, Երկայն և նեղ սեղան մը, որ պատին քովը կը գտնուէր և պատուհանին առջեւէն մինչեւ դուռը կ'երկարէր և որու վրայ ալ գրիւ մը կար. անոր վրայ պառկելի յարմար դատեց, գրիւ վար առաւ և պայուսակը վրան դրաւ և ինքն ալ հանգստութեամբ պառկեցաւ: Քանի մը վայրկեան յետոյ, քաղցր քուն մը իր աչքերը գոցեց, և յիշատակ մը իր պատանեկութենէն դուրս եկաւ հոգւոյն մէջէն երազի փոխուած: Կ'երազէր թէ ինք իբր 8-9 տարեկան տղայ մը Ալբիւլէ անուամբ գետակի մը ափին վրայ հանուած, սեւ տղմին մէջ թաւալիլ կ'ուզէր, յետոյ ընկերներուն իբր սեւամորթ երեւնալու համար: Ասիկա երկայն եկաւ իրեն, իբրեւ թէ տախտակ մը արգելք կ'ըլլար տղմին մէջ մտնելու, վերջապէս արգելքը կը ջնջուի, և լաւ մը կ'ընկղմի ականջներէն վեր սև զանգուածին մէջ, քիչ մը ատեն տղմին մէջ աղէկ չզգար, բայց մէկ արագ շարժումով իր բոլոր դէմքը, բերանը և քիթը անով ծածկուեցան և միայն խղճուիլը մնացած էր:

Ասոր վրայ արթնցաւ և պառկեցաւ տաշտի մը մէջ, որուն վրայ տախտակէ կափարիչ մը կար, (Գերմանիոյ մէջ սովորութիւն է որ սմէն պանդոկապետ իր հարսանիքին հացը ինքն իր ձեռքով եփէ): Յետոյ երբ անիկա վարվուուն երազին մէջ կը ճգնէր՝ տախտակին վրայ ասդին երեւալով, տաշտին կափարիչը բոլորովին վար սահեցաւ, և երազողն իր պայուսակով մէկտեղ հացի խըմորի զանգուածին մէջ գլտորեցաւ:

Երբոր Անդրէաս իր լոգարանը արթուն աչքերով տեսաւ, մէկ ոստումով տաշտին մէջէն դուրս ցատկեց: Բայց ընելիքը չէր գիտեր, եթէ օգնութեան կանչէր մէկը, այն ատեն պանդոկապետն պիտի իմանար և

պիտի բարկանար իր հարսանիքի հացին խմորը ապականելուն համար, և յետոյ պանդոկին մէջ գտնուող մարդոց, ծառաներուն, և տղոց ծաղրն ու ծաղրանքն իր վրայ պիտի հրաւիրէր: Այն ատեն որոշեց առանց հրաժեշտի մեկնիլ, վրան գլուխը թօթուեց որ խմորին կտորները ասդին անդին կը թռչտէին, գլխարկը, դաւաղանը և պայուսակը առաւ ու պատուհանէն դուրս ելաւ և ուղղակի հոն դարձաւ ուրկէ որ ե-



ձանչցաւ հացի խմորի մէջ շրջող Անդրէասը

կած էր: Կրցածին չափ վազեց, արշալոյսէն առաջ մօրը տունը հասնելու համար, հացի խմորին ծեփին տակ խողի ապուխտի նման կը քրտնէր, իբրեւ թէ խմորին մէջ պատատուած փռան մը մէջ եփած ըլլար:

Մայրն ալ քիչ քնացած էր նոյն գիշերն, որովհետեւ իր որդւոյն վերստին գալու հաստատ յոյսը զինքն անհանգիստ կ'ընէր. արդէն արեւն չծագելէն առաջ դրան առջեւ կեցած, մարգագետինն ծայրը կը դիտէր: Երկայն ատեն հոն չսպասեց և շուտով ձանչցաւ հացի խմորի մէջ շրջող Անդրէասը,

որ երբէք չէր մտածեր թէ առաւօտուն կանուխ ուղի վիճակին մէջ իրեն տուն գալը մօրն ուրախութիւն, թէ վարմանք պիտի պատճառէր. ապա միայն դրացիներէն չը տեսնուելու համար, աճապարանօք տուն եկաւ: Ժամ մը իր երեսը լուալէն և արհեստի զգեստները հագնելէն ետքը վերջտին իր աթոռակին վրայ նստեցաւ և կարել սկսաւ կօշիկը, զոր դրացին առջի օրը բերած էր՝ իբր թէ երեկուան և այսօրուան մէջ տարօրինակ բան մը պատահած չըլլար:

Այլ եւս ըստ կամաց մօրը. զինքը սիրող ընկերակիցէ զատ ուրիշ բան չփնտռեց և մեծ հանդէսով հարսանիք ըրաւ:

Քանի մը օր առաջ յիշեց պանդոկապետին խմորը, զոր դէպի Ամերիկա ընելիք ճամբորդութեան մէջ ապականած էր, և Մէքէնտօրֆի պանդոկապետին թղթատարով առանց անունը ստորագրելու իբր փնտույ փոխարինութիւն երեք նոր դալէրներ շրկեց:

Թարգմ.

Ա. ԱՐԴՈՒԿ

Մ Ր Յ Ո Ւ Մ

« Կ'ուզե՞մ շուտ մը մեծնալ հայրիկին պէս ըլլալ, քե ոչ տղայ մնալ աւելի լաւ կը սեպեմ: Ինչո՞ւ համար: »

« Հանրագիտակ » մանկավարժական Հանդէսի խմբագրութեան կը փութամ իբր դպրոցական մը պատասխանել հետեւեալ նըկատողութիւններով: « Կ'ուզէ՞ք շուտ մը մեծնալ հայրիկին պէս ըլլալ, թէ ոչ տղայ մնալ աւելի լաւ կը սեպեք: » Թէ և կեանքի ամէնէն անփորձ եղանակին մէջ կը գըտնուիմ, բայց խորապէս կ'զգամ թէ « Հայրիկ »-ի մը կեանքը բազմաչոգ տաժանքներու պատկերն է իր իսկութեանը մէջ: « Կեանքի պայքար »-ը առածի կարգ անցած տիեզերական ճշմարտութիւն մըն է. կը ծանրանայ իր բոլոր երևոյթներով հայրիկին վրայ որ դժխեմ բախտին կամէութիւններուն դէմ կը մաքառի. փոթորկայոյզ ծովու մը մէջ ինկող մարդուն պէս կ'ոգորի ան աշխարհի « Կեանք » կոչուած վիհին մէջ, որ արտաքինապէս կապոյտ ու դիւթիչ կը հանդիսանայ, թէ և իր խօսքերուն գոգը պահուած ըլլան

արհաւիրքներ: «Հայրիկ»ին կեանքը բացարձակ զոհաբերութիւն մըն է սակայն, իր ընտանիքին, որուն քաղցրութիւնները կը սրտապնդեն զինքը, վերեւ ուրուագծուած դժկերպ պատկերին առջեւ: Իրրեւ պատանի մը անուշիկ երազի մը պէս կ'օրօրէ գիւս ընտանիքի հայր ըլլալու վեհմ գաղափարը, բայց երբ այդ կեանքի սեպ գաւազները դիմացա կը ցցուին, պահ մը կ'ընկրկիմ, յուսահատ մարդու մը պէս, յոռետեսի մը խորհրդածութիւններու գիրկ կ'իյնամ ու չեմ կրնար ճողոպրիլ վիշտի դարաւոր ճիւղաներէն: «Հայրիկ»ի ընտանեկան հոգերը գահաձէժ խորափետերու պէս կը դողացնեն զիս, մոռցնելով նաեւ վաղանցուկ բերկրանքը ընթանեկան կեանքի, որ ըստ իս՝ վիշտերու շղթայ մըն է, որուն օղակներուն մէջ երբեմն ոսկեղէններ ալ կը գտնուին: Սոյն օրինակ ակնարկներ ինքնին վեր կը հանեն «Հայրիկ»ի կեանքին դժուարութիւնները, որոնք — եթէ չեմ խալիւր — իր բարոյական արժանիքը ա'լ աւելի կը բարձրացնեն. թէպէտ ես յաւէտ չպիտի ուզէի ո'չ այդ առապարներուն մէջ տաժանիլ եւ ո'չ ալ այդ դերփուկ վայրին մէջ վերընծիւղուած ծաղիկը, արժանիքը, Անպղտոր առուակի մը կը նմանի տղայական կեանքը՝ որ մէջ կը ցուցնէ կապոյտ երկինքը՝ իր վաղանցուկ փառքերովը, փոթորիկներ չեն կրնար ամպոտել այդ շափիւղայ կամարը եւ ոչ ալ կրնան պղտորել գլգլացող առուակը: Դժբախտային կեանքի կենդանի մանրանկարն է մեր անցուցած զուարթ կեանքը. ուստի՝ եթէ կարելի ըլլար միշտ տղայ մնալ՝ պիտի ուզէի, բայց աւա՛ղ... որ պիտի մեծնամ եթէ չմեռնիմ:

Աշակ. Ղալաթիոյ Կեդր. վարժ. Ա. կարգի
ՎԱՀԱՆ Ա. ՀԱՄԱՄՃԵԱՆ

Կը փակենք Հանրագիտակի Առաջին մրցումը, եւ մեր խոստումին համեմատ մէկ տարեկան «Բուրաստան Մանկանց կը նուիրենք»-ի Գէորգ Յ. Ուրֆալեանի, իսկ Պ. Վահան Ա. Համամճեանի՝ Կաղանդի առթիւ կը նուիրենք մէկ օրինակ «Մանկութիւն երեւելի Արանց»-ը, քանի որ ինքն ալ մանուկ մնալ կը փափարի:

Նոր պատասխաններ ընդունած ենք Իբրանոսեան վարժարանի սաներէն, ինչպէս նաեւ Կաղանդի համար շարադրուած տաղաչափութիւններ, բայց շատ ուշ ձեռքբերիս հասնելուն՝ կը խոստանանք յաջորդ թիւով հրատարակել:



(Մայրն ի սնար մանկան)

Գիշեր է, ամէն ինչ կը լռէ. կոհակը՝ ծովափին վրայ, դեփիւռը՝ պուրակին մէջ, աչեր՝ քնով թաթաղուն, ամէն հոգերէ զերծ, անուրջներու աշխարհին մէջ թափառայած:

Լուսթիւն ու մթութիւն պատած են երկինքն ու երկիր, կապոյտ կամարին վրայ մոխրաթոյր ամպերն՝ իրենց շղարշ ու քող ձգած արծաթ-ճակատ լուսնկային՝ կ'երևի թէ կը նախանձին անոր փառքին. բայց նա լուսայոյլ ու ոսկեգիսակ լուսաւոր նաժիշտներէն չըջապատուած՝ երկնից պատշգամէն նայող Աստուծոյ խորհրդաւոր նայուածքին նման յաղթած է հանդէպ այդ պատուհանին՝ որ կը բացուի յուշիկ ակնա-կիտ լճակին վրայ:

Լուսնի մէկ նշոյլին հետ նայուածքս այդ պատուհանէն ներս կը թափանցէ ու կը տեսնեմ գիշերային այդ երազուն ու խորհրդաւոր մենութեան մէջ մայր մը, դիցուհւոյ մը նման երկնային ճառագայթներով լուսապսակ ու հերարձակ՝ ծած իր մանկան օրլանին վրայ, որպէս Յիսուս մանկան խանձարուրին վրայ աւագ խորանին Տիրամայրը՝ որ կը մատուակէ իր կուրծքին նեկտարը՝ իր առջինեկ սիրոյն նախախայրիք, անուշիկ ու քնքուշիկ մանկան:

Այդ խոնարհ յարկին տակ, սոխակի մը հեշտաւայլ դայլայլիկովը կ'երգէ մին այն օրօրներէն որուն մէջ մայրերն կը դնեն իրենց սիրուն ամբողջ, իրենց հոգին համակ ու կը յուզեն ամէնէն անդգայ սիրտն անգամ: Եւ արդէն ո՞ր ձայն մօր մը ձայնէն աւելի ունի անուշութիւն, որուն մէջ նախախանութիւն մը միշտ կը խօսի: Մօր մը օրօրէն աւելի, մանաւանդ գիշերային լռիկ ու մնջիկ ժամերուն մէջ, հոգեյոյզ ու ազդեցիկ երգ մը շա՛մ էք երբէք:

Օրօ՛ր, օրօ՛ր, իմ մէկ հատիկ զաւակս, գանգուր վարսերդ պսակ խարտեաշ գլխիկիդ շնորհ ու գեղ կուտան, ծաղիկ կը բացուին, վարդ ու շուշան կը բուրեն խանձարուրդ Վարդավառի ու Մաղկազարդի սեղան կը յօրինեն:

Քնացի՛ր, քնացի՛ր, մանկիկդ իմ անուշիկ, պաշիկ մ'ալ աւելի ահա քեզի, ըրէ

դուռն պաճիկ. մայրիկդ սնարին վերև քեզ հրեշտակ պահապան, կուրծս վահան Եգեան, սէրս շանթարգել անտեղիտատալի:


Օրօ՞ր, իմ մանկիկ, մանկիկ սիրասուն, քեզ տուի կեանքս, որ կեանքս յաւելուս: Քեզմով ես նորէն վերընծիւղ ծաղկիմ, աշուններովդ նայիմ ես արեւուն, սիրտդ կը տրոփէ լանջքիս տակ, շրթունքէդ մէկ ժըպիտ նոր կեանք մը կ'սկսի հոգւոյս մէջ, լացիդ մէն մի ճիչ, արցունքիդ մէն մի շիթ արեան կայլակ կը կաթեն սրտիս մէջ:

Քնացի՛ր դու, հեզիկ հանդարտիկ, ոսկի երազներ ծաղիկ սփռեն շուրջդ, մայրական շնչիկս անուշ ու զով հողմիկ թող ըլլայ, օրօրներս ըլլան երգերդ անուշիկ, քնանաս հանդարտ, մեծնաս անվիշտ, ըլլաս մայրիկիդ գրօսանքն անուշ ու կեանքիս դառնութեան բաժակին մէջ երկնային մխիթարանքի ու յոյսի քաղցր կայլակը:

Ննջէ՛ զաւակս, նիրհէ անուշ, գիրկս ու գոգս ընդ միշտ քեզ գրգարան, ծունկերս քեզ բարձ, ծոցիկս քեզ բոյն, կուրծքս քեզ քնարան, սէրս քեզ պահապան, կեանքս ամբողջ քեզ ընծայ բոլորանուէր: Կեանքի տառապանքն, ամէն վիշտ ու դառնութիւն, ամէնքն ալ թող ինձ մնան բաժին: Հրճուանքն ու գրօսանք միշտ բաժին ըլլան քեզ: մէն մի քայլիդ ծիծաղկոտ յոյսեր ծաղիկ սփռեն, ոսկի փափաքներ թիթեռնիկ թռչտին շուրջդ: Անցնին օրերդ այնքան խաղաղաւետ՝ որքան լուսնեկին ճամանչները քաղցրօրօր ու վճիտ լճակին ջինջ ծոցէն: Կեանքիդ ծովակը չտեսնէ երբէք ալեկոծում և ոչ երկինքիդ ջինջ կամսաբը ծածկեն սեփ սև ամպեր: Ըլլաս Բեթլեհէմի մարին Մանուկն, ոյր խանձարուրին վրայ նորանչան աստղը ճառագայթեց ու իշխաններն իրեն ընծայաբեր՝ մատուցին երկրպագութիւն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊՕՂՈՍԵԱՆ

Ուսանող Պէզճեան Մայր-Վարժարանի



ՊԶՏԻԿ ԱՐԱՄԸ ԵՒ ՀՍԿԱՆ

(Գերմաներէնի Գնահոգութեամբ)

Պատիկ Արամ՝ գրեթէ ամէն օր կ'երգէր և կը սուլէր, զուարթ և երջանիկ տղայ մըն էր:

Օր մը, յանդգնեցաւ վերջապէս իր բնակարանէն քիչ հեռու անտառ մը մտնելու: Թէև շատ անգամ սոյն անտառին մինչև եղերքը գացած էր, սակայն անիկայ իրեն այնքան տխուր երեւցած էր, որ երբէք չէր համարձակած ներս մտնելու:

Արամ սովորականէն աւելի զուարթ էր այդ օրը, արեւը աւելի շողշողուն երեւցաւ, ստուերը՝ աւելի անուշ, իսկ ծաղիկներն այնքան գեղեցիկ, որ անտառը թնդացնելու չափ երգեց և սուլեց: Մաղիկներու և ծառերուն մէջ քիչ մը զուարճացաւ, շատ ուրախացաւ այսպիսի հեշտալի վայր մը գացած ըլլալուն համար: Փոքրիկ առուակ մը կարկաչելով օձապտոյտ շրջան կ'ընէր, և ջրերն այնքան վճիտ կ'երեւային, որ Արամ անոր պայծառութենէն հրապուրուելով՝ ծռեցաւ խմելու համար:

Յանկարծ, ետեւէն մէկը գինքը կը բռնէ, կը դառնայ և կը տեսնէ ինքզինքը՝ իրմէ հարիւր անգամ աւելի մեծ հսկայի մը ձեռքին մէջ: Ասիկայ ուրախութեամբ մը իրեն նայեցաւ, բերանաբաց, այնպիսի աղմուկ մը հանելով որ Արամին սոսկում ազդեց: Խեղճ պզտիկը կը մտածէր թէ հսկան գինքը պիտի կլլէր: Սակայն այսպէս չըբաւ. հապա խոշոր տոպրակի մը մէջ դնելու տարաւ: Արամ իզուր կը ջանար փախչելու ծակ մը բանալով. « Ձեռքէս պիտի չպրծիս » կ'ըսէր հսկան քրքիչ բառաւով:

Վերջապէս տունը հասան: Սոսկալի տըխուր տուն մըն էր. մեծ պատով մը շրջապատուած, առանց ծառերու և առանց ծաղիկներու: Հսկան Արամը տոպրակէն դուրս հանեց, խեղճը մտածեց թէ վերջին ժամը հասած էր, որովհետև աչքը շուրջը պտըտցնելով, մեծ կրակ մը տեսաւ, որ կը բորբոքէր:

Սակայն հսկան անոր բան մը չըրաւ, հապա երկաթէ ցողերով շրջապատեալ փոքրիկ տուփի մը մէջ նետեց: Արամ յուսահատութենէն խենթացած, գլուխը ձողերուն կը դարնէր, յառաջ կը վազէր, ետև կը վազէր տուփին մէջ, մայրն օգնութեան կը կանչէր, բայց ի գուր: Հսկան կտոր մը չոր հաց և ջուր տալով հեռացաւ: Հետեւալ օրը, գինքը տեսնելու եկաւ և տեսաւ որ Արամ ո'չ հացին և ո'չ ջուրին էր դպած: Այն ատեն գլխէն բռնեց և բերնին մէջ

քանի մը փշրանք խոթեց, սաստիկ բարկանալով որ Արամ բան մը չէր կերած և խմած: Դարձեալ ամբողջ օր մը մթութեան մէջ փառնուած թողուց: Վերջապէս հսկան վերստին եկաւ և ստիպեց որ երգէ, ինչպէս առաջաները կ'ընէր, երբ Վուարթ և երջանիկ էր: «Երգէ՛, երգէ՛» ըսաւ: Խեղճ Արամ այնքան տխուր էր, որ չէր կրնար երգել, և ինչպէ՛ս ալ երգէր: Այն ատեն կը զայրազնի «Ես հիմա քեզի աղէկ երգել կուտամ» ըսելով վանդակին դուռը կը բանայ, ու Արամին գլխէն կը բռնէ:

Արամ ճիշդ մը արձակեց հսկային ձեռաց մէջէն պրծելու համար: Բայց ի դուրս:

Ափսո՛ս, սիրելի ընթերցողք. խեղճ Արամ պզտիկ բռնուց մըն եր, իսկ հսկան չար տղայ մը:

Թարգմ. Գաղղ.

ՆՈՒՄԷՆ

Դ Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Պ

Փ Ի Ի Լ Վ Ե Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵՂՈՆՆԸ

(Շարունակութիւն 7րդ թիւէն)

Ը.

Այլթօնա՛ Բիլի երկաթուղիի գծին ծայրը կը գտնուի: Քսան վայրկեանէն կայարան հասանք. հօրեղբայրս կարասիները կըռել, արձանագրել տուաւ, և գացինք դէմ առ դէմ նստանք վակոնին մէջ: Ժամը մէկն էր. վայրաչարժը սուլեց, միտոյները շարժիլ ըսկսան, ճամբայ ելած էինք:

Երկուքս մինակ էինք: Առտուան ցուրտը, շոգեկառքին շուտ շուտ երթալով տեսարաններուն արագաբար փոխուիլը ուշա ուրիշ կողմ դարձուցած էին և ա՛լ չէի մտածեր մեծ խնդրոյն վրայ: Դասախօսը մտքով աւելի հեռունները կ'երթար, գուցէ երկրիս կեդրոնը հասած կարծէր ինքզինքը:

Երեք ժամէն Բիլ հասանք. կարասիները Գօթէնհակի համար արձանագրուած ըլլալով՝ անոնցմով զբաղելու հոգ մը չունէինք: Հօր-

եղբայրս, աճապարանօք, անանկ լաւ հաշուած էր շոգեկառքի ու նաւերուն ժամերը՝ որ մինչեւ իրիկուն սպասել պարտաւորեցանք: Էլլէնօրա շոգենաւը գիշերը ճամբայ կ'ելլեր: Այս ինը ժամու կորուստը՝ անհամբեր ճամբորդին զայրոյթը գրգռեց, շոգենաւ, կառախումբ, ընկերութիւն, ամէնն ալ կորողին խրկեց և գնաց նաւապետը ստիպել որ անմիջապէս ճամբայ ելլէ, ուրկէ վըռընտուեցաւ:

Վերջապէս մութը կոխեց, ժամը չորսին շոգենաւը ճամբայ ելաւ. խաւար գիշեր մըն էր. ծովը ալեկոծ ու ցուրտ հով մը կար, փարոսի պլպլացող քանի մը լոյսէ զատ ուրիշ բան չկրցայ տեսնել:

Առտուան դէմ Գօթէն հասանք, Շէթլանտի արեւմտեան եզերքին վրայ պզտիկ քաղաք մը: Հոս նորէն կառախումբ նստանք և երեք ժամէն Տանըմարքայի մայրաքաղաքը կը հասնէինք: Հօրեղբայրս բոլոր գիշերը աչք չէր գոցեր, կարծեմ աւելի շուտ երթալու համար ոտքովը վակոնը կը հրէր:

Դեռ չհասած, ճամբան՝ ձախ կողմերնիս խոշոր չէնք մը տեսանք որ քիչ մը հիւանդանոցի կը նմանէր:

— Յիմարանոց մըն է, ըսաւ մէկը:

— Հոն երթանք, աւելի աղէկ է, ըսի մտովի. որչափ ալ մեծ ըլլայ այդ տունը՝ նորէն Լիտէնպրօք ուսուցչապետին յիմարութիւնը պատասպարելու չպիտի բաւէ:

Վերջապէս ժամը չորսն էր՝ երբ Գօթէնհակ ոտք դրինք. կարասիները ֆէնիքս պանդոկը փոխադրեցինք, եւ պարզ դարձարանքէ մը յետոյ Հիւսիսի Հնութեանց Թանգարանը գացինք: Տնօրէնը՝ Պր. Թօմսըն, շատ սիրալիկ ընդունելութիւն մը ըրաւ հօրեղբօրս, թէեւ ընդունուած է թէ՛ գիտուն մը ուրիշ գիտունի մը պաղ ընդունելութիւն կ'ընէ: Ինքզինքը բաւորովին մեր տրամադրութեան տակ դրաւ. անանկ հաւտացուցինք իրեն որ Իսլանտայի մէջ պզտիկ ճամբորդութիւն մը կատարելու միտք ունինք իբր պարզ զբօսաշրջիկներ: Շուտ մը քարափ իջանք տեսնելու թէ մեկնող նաւ մը կա՞յ: Սրտիս մէջ յոյս մը ծլեցաւ թէ փոխադրութեան միջոցը պիտի պակսի. բայց չէ՛: Վալֆրի պզտիկ դանիական առագաստանաւ մը Յունիս Չին ճամբայ պիտի ելլեր Ռէյքեաւիք երթալու համար: Գացինք գը-

տանք նաւապետը՝ Պրն. Պիարն. հօրեղբայրս ուրախութենէն չէր գիտեր ինչպէս ձեռքը սեղմէ, ինչ խօսքով շնորհակալ ըլլայ Մարդուկը ապշեր մնացեր էր. իրեն համար պարզ բան մըն էր իսլանտա երթալը՝ քանի որ արհեստն այդ էր, իսկ հօրեղբօրս համար գերագոյն մէկ իմաստ մը ունէր. Սատանորդի նաւապետը օգտուելով

տըտինք, ըսաւ հօրեղբայրս, ինչ աղէկ եղաւ աս նաւուն հանդիպելինս:

Դուրս ելանք. Պր. Լիտէնպրօք կը թողուր որ ուզած տեղս երթամ, ինք ալ հետս կը քալէր, միշտ մտազբաղ, առանց ուշադրութիւն ընելու քաղաքին գլխաւոր շէնքերուն որոց առջեւէն կ'անցնէինք. Լուռ ու մունջ կը քալէինք. ինչպէս չփնտռէի



Վօր-Ֆրէլսէրս - Բիրք եկեղեցին զանգակատունը

այս խանդէն՝ կրկին գին վճարել տուաւ, բայց մենք այդչափ ըստակը չէինք նայել:

— Երկուշաբթի առտու, ժամը մէկին նաւը գտնուեցէք, ըսաւ Պ. Պիարն, գըրպանը լեցնելով առած դրամը:

Պրն. Թօմսընի շնորհակալ եղանք, և Ֆէնիքսի պանդոկը վերադարձանք հագուստներս փոխելու եւ ճաշելու համար:

— Հիմա երթանք քիչ մը քաղաքը պը-

գողտրիկ Վիրլանտուհիս. ինչ հաճոյք չպիտի ունենայի հիմա եթէ կրախպէն հետս ըլլար: Բայց ո՞վ գիտէ անգամ մըն ալ պիտի տեսնե՞մ դինքը:

Ոսկայն բարձր աշտարակ մը հօրեղբօրս ուշը գրաւեց, ըսաւ որ հոն երթանք: Քանի մը նեղ ու ցեխոտ փողոցներէ անցնելէ ետքը Վօր Ֆրէլսէրս-Բիրք եկեղեցին առջեւ հասանք: Թէեւ ասիկա նշանաւոր բան մը

չէր երեւար, բայց կարծեմ բարձր զանգա-
կատունը, հոն ելլող բացօդեայ սանդուղը
իր աչքին զարկած էին:

- Վեր ելլենք, ըսաւ:
- Բայց խելքերնիս պիտի դառնայ:
- Ուզածս ալ ադ է. վարժուինք:
- Բայց...:
- Հետս եկու՛ր, ժամանակ չկորսնցու-
նենք:

Հնազանդեցայ, Գուռը բանալ սուրինք և
սկսանք վեր ելլել: Հօրեղբայրս առջեւէն
կը քալէր, իսկ ես դողդողալով իրեն կը հե-
տեւէի: Մինչեւ զանգակին տեղը սանդուղը
ներսէն էր, որով շատ դժուարութիւն չը
քաշեցի. բայց երբ բացը ելանք, գլուխս
դառնալ սկսաւ. ինծի անանկ կուգար որ
ամբողջ շէնքը կ'օրորուի. չիյնալու համար
երկաթէ պարզ բազրիք մը միայն կար, իսկ
սանդուղին աստիճանները քանի երթային
կը նեղնային:

- Ա՛լ չեմ կրնար յառաջանալ, գոչեցի:
- Վախկո՛տ, ըսաւ անգութ դաստիարակը,
եկի՛ր, վեր ելի՛ր:

Ոտքերս կը դողային, ականջներս բզզալ
սկսան, ծունգերուս վրայ քալել սկսայ, քիչ
մը ետքը սողալով վեր կ'ելլէի. աչքերս գո-
ցեր էի, վերջապէս հօրեղբայրս օձիքէս
քաշեց, աշտարակին ծայրը հասեր էինք:

— Նայէ՛, ըսաւ ադէկ մը չորս կողմէ
նայէ՛, ինքզինքդ անդունդին մէջ նայելու
վարժեցուր:

Աչքերս բացի, տուները պղտիկ, տա-
փակցած բան մը կ'երեւէին. գլխուս վրայ
խոշոր ամպեր կը թաւալէին. տեսողական
պատրանքի մը հետեւանօք ամպերը անշարժ
կեցած կ'երեւային. իսկ դանգալատունը,
կարծես թէ ահագին արագութեամբ մը կը
մղուէր, կը յառաջանար: Հեռուն մէկ կող-
մը կանաչորակ դաշտերը, իսկ անդին ճեղ-
մակ բիծերով՝ առագաստանաւերով ծած-
կուած ծովը: Ուռլին դասս ժամ մը տեւեց,
Երբ վար իջանք եւ ինքզինքս ամուր գետ-
նի մը վրայ զգացի՝ տեւայ սր ոտքերս բռն-
նըւած էին:

— Վաղը նորէն պիտի գանք, ըսաւ հօ-
րեղբայրս:

Արդարեւ հինգ օր, իրարու վրայ ե-
կանք այդ աշտարակին ծայրը բարձրա-
ցանք, իրաւ ալ քիչ քիչ վարժուիլ սկսայ:

Թ.

Մեկնելու օրերնիս հասաւ Պրն. Թօմարն
մեզի յանձնարարական նամակներ տուաւ,
մին Թրամբ կոմսին՝ Իսլանտայի կառավա-
րիչին համար, միւսը Պրն. Բոքթուրսընի՝
Եպիսկոպոսին տեղապահին համար, և եր-
րորդ մը Պրն. Ֆինսէնի՝ Ռէյքեավիքի քա-
ղաքապետին հասցէին, ի փոխարէն հօրեղ-
բայրս ջերմագին շնորհակալութիւնները
նուիրեց:

Յունիսի երկուքն էր, կարասինիս արդէն
նաւ փոխադրած էինք, մենք ալ ժամանա-
կին գացինք սենեակնիս մտանք: Շատ չըս-
պասեցինք: Վալքիրի բոլոր առագաստները
հովին տուած ճամբայ ինկաւ: Ժամ մը ետք
Քորէնհակը կորսուած էր աչքերնուս: Նաւը
սրընթաց էր թէւեւ, բայց առագաստանաւի
մը մէջ կարելի չէ վստահօրէն հաշուի դնել
ճամբորդութեան տեւողութիւնը, Վալքիրի՝
Ռէյքեավիք կը տանէր ածուխ, տան կա-
րասի, խեցեղէն, բրդեայ հագուստներ ու
ցորեն. նաւազներու խումբը ընդամենը հինգ
գանիացիներէ կը բաղկանար:

— Ծամբորդութիւնը ո՞րքան պիտի տե-
ւէ, հարցուց հօրեղբայրս նաւապետին:

— Տասը օրի չափ, պատասխանեց, եթէ
հակառակ հովերու շհանդպինք:

— Այն ատեն չա՛տ ու՛շ կը մնանք:

— Ո՛չ, Պրն. Լիտէնպօք, անհոգ ե-
ղիք, ինչ որ ալ ըլլայ, ժամանակին կը հաս-
ցնեմ ձեզի:

Իրիկուան դէմ նաւը անցաւ Սքակէրաքի
նեղուցէն. Նորվեգիոյ ծայրը Լինտնէսի հը-
ուանդանին մտէն գնաց եւ Հիւսիսային ծով
մտաւ: Երկու օր ետքը Սկովտիոյ լեռները
հեռուն նշմարուիլ սկսան, ու ա՛լ Ատլան-
տեանը մտանք: Վալքիրի ստիպուեցաւ զիկ-
զակել հիւսիսային բուռն քամիի մը դէմ:
Ուսուռն ութն էր, Սկովտիական վերջին կըղ-
զին աչքէ կորանցուցինք եւ ուղղուեցանք
դէպի Բորդլանտ, Իսլանտայի հարաւային
կողմը հրաւանդան մը:

Ծամբորդութեան միջոցին ես բնաւ ան-
հանգստութիւն մը չզգացի. հօրեղբայրս
մինչեւ վերջը հիւանդ էր, այս պատճառաւ
շատ կ'ամօշնար, սենեակը քաշուած դուրս
չէր ելլեր բնաւ, փակուած՝ չորս նեղ որովե-
րու մէջ՝ որոնք կը ճարճատէին ամէն մէկ

ալիքի հարուածի՝ հազարումէկ հարցումներ կ'որոճար մտքին մէջ, առանց մէկուն հետ խօսել կարենալու. շիտակը արժանի էր այս վիճակին:

Տասնմէկին Բօրդլանտի գլուխէն անցանք. ծովը ալեկոծ էր, Վալքերի երկայն պտոյտ մը ըլլաւ Ռէյքեանիսի հրուանդանէն դառնալու համար. այս միջոցին փոթորիկ մը բռնեց մեզի եւ հազիւ կրցանք քառասունեւութը ժամէն, բոլոր առաքաստները գոցած Սքակէնի մէկ խորշը ապաւինիլ. տեղացի նաւուղիդ մը օգնութեան հասաւ եւ երեք ժամ վերջը Ռէյքեալիքի առջեւ խաբխիս նետած էինք:

Դասախօսը սենեակէն դուրս ելաւ, դէմքը աւրուած, գոյնը նետած. դուրսը քարափին վրայ ամբոխը խոնուած՝ հասած ապրանքներուն դուրս հանուելուն կ'սպասէր: Հօրեղբայրս թեւէս բռնելով նաւակամուրջին ծայրը տալաւ եւ ծոցին հիւսիսային կողմը երկու դադաթով բարձր լեռ մը ցուցուց. — Սնէֆէլսն է, Սնէֆէլսը:

Յետոյ չուտ մը հեռանալով նաւակ ցատքեց, բաժնուելով այդ նաւէն որ իր բանտը, չըւեմ հիւանդանոցը եղած էր:

Քարափին վրայ զօրավարի հագուստով մէկը կար, Պարին Թրամբն էր, կղզիին կառավարիչը. հօրեղբայրս ինքզինքը ներկայացուց եւ տասը վայրկեան դանիերէն խօսակցութենէ մը ետքը եւս դարձաւ. ես այդ լեզուէն բան մը չէի հասկնար, բայց տեսայ որ խօսակցութեան արդիւնքը դոհացուցիչ եղաւ. Պառոն Թրամբ ինքզինքը բոլորովին մեր տրամադրութեան տակ կը դնէր:

Պրն. Ֆինսէն՝ քաղաքագետը սիրալիր կերպով ընդունեց մեզի, Մինակ տեղապահը Պ. Բիքթըրսօն հօն չէր գտնուէր. թեմական այցելութեան ելած ըլլալով, բայց անոր տեղը դտանք սքանչելի մարդ մը, Պ. Ֆրիսրիքսըն, Ռէյքեալիքի դպրոցին մէջ բնական պատմութեան դասախօսը. համեստ գիտունը խալանտերէն ու լատիներէն կը խօսէր, անանկ որ խալանտա անցուցած բոլոր ժամանակս մինակ այս մարդուն հետ կրցայ տեսնուիլ. իր տունը երեք սենեակ ունէր, երկուքը մեզի տուաւ ուր աղւոր մը տեղաւորուեցանք:

Թարգմ.

ՋԱՌԵՋ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

LE PRIX D'EXCELLENCE

Grand père qui gâtait son petit Lucien,
Et le comblait de sous quand il travaillait bien
Grand père qui menait son gamain à l'école,
Est mort, voici trois mois. Sa dernière parole
Fut pour son bien-aimé. Lui, depuis cette mort,
S'applique à ses leçons, et, redoublant d'effort,
Distance ses rivaux. — Professeurs, père et mère

Ne reconnaissent point l'étourdi de naguère
Et suivent ses progrès, satisfaits et surpris.
L'enfant ne faiblit pas. Quand vient le jour
des prix,

Il s'entend décerner, au milieu du silence,
Cette couronne d'or qu'on donne à l'excellence
Et trois livres, par lui vaillamment disputés!
Quel bonheur! . . . ses parents l'embrassent,
enchantés,

Et lui, fier à bon droit de son succès rayonne.

«Petit, va faire un tour avec ta vieille bonne
Dit papa; mere et moi rentrons: demain matin
Nous irons tous les trois, dans un grand
magasain,

Choisir deux beaux jouets, ta juste récompense
Tes prix...tu ne veux pas t'en charger, je pense.
—Oh sil je ne veux pas m'en séparer encore».

.
Le soir, l'enfant revient sans sa couronne d'or.

Maman, je me suis fait conduire au cimetière
Pour porter ma couronne à ce pauvre grand
père:

Je me suis sur sa tombe en fleurs agenouillé
Et j'ai dit: « C'est pour toi que j'ai bien travaillé ».

Ça lui fera plaisir, vois-tu, je me figure.

La mère sur son cœur prend sa chère figure
La caraisse et répond, frissonnante d'émoi:

« Mon fils, je te bénis pour grand père et
pour moi ».

Սոյն ֆրանսերէն հատուածը գաղափարի ո՛ր ձևի սիրունութեան տիպար մըն է: Չհամարձակեցանք մեր կողմէ հայերէն թարգմանութիւն մը ընելով ընթերցողներուն ներկայացնելու, մտածելով որ մենէ ալեւոր թարգմանողներ ալ կան, ուստի հրաւեր կը կարդանք անոնց՝ մինչեւ մէկ ամիս թարգմանելով սոյն կտորը մեզի յըկեն. արժակ կամ ոտանաւոր կարեւորութիւն չունի, կը բաւէ որ սիրուն գրուածք մը ըլլայ՝ առանց բնագրին խեղադիւրման:

Ենէ մինչեւ որոշեալ ժամանակ զոյտրիկ թարգմանութիւն մը մեզի հասնի, մենք ալ՝ իբր լրացուցիչ՝ մէկ էջ մեծութեամբ սքանչելի պատկեր մը փորագրելով միասին կը տպենք: Ասկէ զատ առաջին հանգիստցողը կ'ստանայ բնապատմական գունաւոր ալպոմ մը:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը հրատարակուի ամեն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին			
4. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ	ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ 4. ՊԷՐՊԷՐԵԱՆ	Տարեկանը 45 դահեկան
Վեցամսեան	20 »		Վեցամսեան 25 »
Եռամսեան	10 »	4. ՊՈԼԻՍ	Եռամսեան 12 1/2 »
ՌՈՒՍԻՈՑ ՀԱՄԱՐ		ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ՃԱՏՏԷՍԻ	ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկանը	4 բուպի	ԹԻԼ 61	Տարեկանը 10 ձրանք

Ձեռնէ կը ծախուի հաար 40 փարայ

Պատասխան 9րդ հարցման

Ընդհանուր կարծիք մը կայ Դերմանիոյ մէջ թէ՛ շոգինաւներու պտուտակածեւ անիւին առաջին հընարիչը Սօված ֆրանսացին եւ Սմիթ անգլիացին չ'են, այլ Ռըսըլ անուն պոհմիացին է։ Սա 1812ին Վիէնայի համալսարանին մէջ տակաւին ուսանող եղած ատեն, պտուտակի մասին գաղափար մը յղացած էր։ 1821ին, Աւստրիոյ նաւային անտառներուն վերատեսուէ ըլլալով՝ իր գաղափարն ի գործ դրաւ մակոյկի մը վրայ, ուր երկու մարդ կը շարժէին պտուտակը։ 1829ին, Թրիէսթէի մէջ ուրիշ փորձ մըն ալ ըրաւ նաւով մը, որ 45 թօնո տարողութիւն եւ 6 ժիու ոչո՛ւ ունէր։ Ժամանակ անցնելէն վերջ, ուրիշ մակոյկ մըն ալ տարաւ Բարիզ, որ պտուտակածեւ անիւ ունէր։

Լուծումն թիւ 10րդ հանելուկի



Լուծումն թիւ 12րդ հանելուկի

ՓԵՅՈՒՐ ԳՐԻԶ

Պատասխան 13րդ հարցման

Որովհետեւ մետաղն աղէկ հաղորդիչ ըլլալով՝ կ'առնէ ջուրէն անոր ջերմութեան մէկ մասը ու եռացող ջուրը եթէ ջերմութեան մէկ աստիճանն ալ կորսնցնէ՝ անմիջապէս կը դադրի եռալէ։ Իսկ փայտը գէշ հաղորդիչ ըլլալով՝ կամաց կամաց կ'առնէ ջուրին տաքութիւնը։ Իսկ ջուրը տակի կրակէն նորէն ջերմութիւն առնելով՝ իր բարեխառնութիւնը չի կորսնցնէր։

Պատասխան 14րդ հարցման

Որովհետեւ Ա. — Բրդեղէն հիւսուածներն ամենալաւ ծծողներ ըլլալով՝ ճառագայթացեալ ջերմութեան՝ երկրէս ճառագայթուածը կը ծծեն՝ քանի իրենցը կորսնցնեն, այս պատճառով երբէք չեն հասնիր այնչափ ցած բարեխառնութեան մը որ իրենց վրայ խրտացնէ օդին ջրային շոգին։ — Բ. Գրեթէ ամէն կերպասներ ծածկուած են ամենաբարակ թելերով՝ որոնց վրայ կը նստի շոգիի առաջին փամփուշտը որ կը ձեւացնէ ցօղի կաթիլը։ Բայց հազիւ թէ կը նստի՝ մակերեսէն ծածկուած եւ ընդունած ջերմութիւնը կ'ընդլայնէ անոր մէջ պարունակած ջրային շոգին, եւ այս փամփուշտը աւելի թնթեւնալով վեր կ'ելլէ, զրեթէ բոլորովին չոր թողով կերպասը, մինչդեռ բոլորտիքը եղած խոտը կը խոնանայ՝ վրան խտացած ցօղին պատճառաւ։

Պատասխան 15րդ հարցման

Երբ պողպատին կտորը կայծքարին զարնենք՝ ջերմութիւն յառաջ կուգայ եւ պողպատէն մաս մը կը փրկի եւ այդ մասնիկն է որ ջերմութենէն տաքնալով կրակ կ'առնէ եւ ահա կայծ մը յառաջ կուգայ։

13, 14 եւ 15րդ հարցումներուն պատասխանեցին Պարոնայր Միհրան Մկրտչեան եւ Կարապետ Յ. Էսմէրեան՝ Աշ. Կեղը. վարժ. Ղալաթիոյ։

Թուրքական Տրդ հանն ուկը լուծեց նաեւ Ամասիայէն՝ Իրբանոսեան վարժարանի աշակերտ Յարութիւն Ն. Նիկողոսեան։

ԱՐՏՕՆԱՏԷՐ — ԽՄՐԱԳՐԱՊԵՏ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ 4. ՊԷՐՊԷՐԵԱՆ

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

1880

